ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հուլիսի 2000թ. N 138

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային[*12)] դրոշմանիշերով դրոշմավորման մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման կարգը հստակեցնելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշումէ.

1. Հաստատել՝

ա) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային[*12)] դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկը (կցվում է).

Սույնկետում նշված՝ ԱՏԳ ապրանքային անվանացանկի 2208 ծածկագրին դասվող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված՝ մինչև 9 տոկոսը ներառյալ սպիրտայնություն ունեցող սպիրտային խմիչքները, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված՝ մինչև 0,05 լիտր տարողությամբ կոնյակի և (կամ) գինու արտադրանքը ենթակա չեն պարտադիր դրոշմավորման:

*Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքները Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մանրածախ առևտրի ոլորտում իրացվում են սույն որոշման 1-ին կետի «ա» ենթակետով հաստատված թույլատրելի չափերով տարաների (տուփերի) ցանկին համապատասխան՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետի «գ» ենթակետով հաստատված կարգով սահմանված դեպքերի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված՝ մինչև 0,05 լիտր տարողությամբ տարաներով իրացվող կոնյակի և գինիների:[*2),*12)]*

բ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ոգելիցխմիչքների և էթիլային սպիրտի (ներառյալ շշալցումը) և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ծխախոտի արտադրանքի մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար թույլատրելի չափերով տարաների (տուփերի) ցանկը (կցվում է).

գ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային[*12)] դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման կարգը (կցվում է):

*դ) Արտադրողների մոտ առկա՝ «2003» թվագրված նմուշի ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման կարգը համաձայն հավելվածի.[*4)]*

*է) արտադրողների մոտ առկա՝ «2001» թվագրված նմուշի ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման կարգը՝ համաձայն հավելվածի.[*2)]*

*ը) արտադրողների մոտ առկա՝ «2004» թվագրված նմուշի ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ալկոհոլային խմիչքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման կարգը՝ համաձայն հավելվածի.[*6)]*

*թ) արտադրողների մոտ առկա՝ «2006» և «2007» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ալկոհոլային խմիչքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման կարգը՝ համաձայն հավելվածի[*13)]*

*ժ) արտադրողների մոտ առկա՝ «2009» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ալկոհոլային խմիչքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման կարգը՝ համաձայն հավելվածի[*14)]*

2. Սահմանել, որ՝

ա) 2000 թվականի փետրվարի 1-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ոգելիցխմիչքի, էթիլային սպիրտի և ծխախոտի արտադրանքի դրոշմավորման համար կիրառվելու են ակցիզային նորնմուշի դրոշմանիշեր.

բ) 2000 թվականի փետրվարի 1-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված ոգելիցխմիչքի, էթիլային սպիրտի և ծխախոտի արտադրանքի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մանրածախ առևտրի ոլորտում իրացումը կատարվում է սույն որոշման 1-ին կետի «բ» ենթակետով հաստատված ցանկին համապատասխան, բացառությամբ սույն որոշման 3-րդ կետով հաստատված կարգով սահմանված դեպքերի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված՝ մինչև 0.05 լիտր տարողությամբ տարաներով իրացվող կոնյակի և գինիների.

գ) 2000 թվականի հուլիսի 15-ից արգելվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված «1997», «1998» և «1999» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում.

դ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող՝ դրոշմավորման ենթակա էթիլային սպիրտի համար նախատեսված ակցիզային յուրաքանչյուր դրոշմանիշի համար վճարվում է 100 դրամ, ոգելիցխմիչքի արտադրանքի համար՝ 50 դրամ, ծխախոտի արտադրանքի համար՝ 25 դրամ:

Սույնկետի «դ» ենթակետի համապատասխան ակցիզային դրոշմանիշերի համար վճարված գումարները ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրող անձանց համար համարվում են ակցիզային հարկի կանխավճար:

ե/ 2002 թվականի մայիսի 10-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արգելվում են՝ «2000» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը:[*1)]

ե) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արգելվում են.

- 2004թ. հուլիսի 15-ից՝

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրված «2002» և «2003» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը,

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (բացի Հայաստանի Հանրապետությունից) ներմուծված «2002» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը.

- 2004թ. սեպտեմբերի 1-ից՝

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված «2003» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը: [*4)]

զ) 2003 թվականի ապրիլի 1-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արգելվում են՝

-Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված՝ «2001» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը,

-Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված՝ «2001» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը,

$զ^1$) 2005 թվականի նոյեմբերի 1-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արգելվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված՝ «2003» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը. [*5)]

$զ^2$) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արգելվում են՝

- 2006 թվականի հուլիսի 1-ից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրված «2004» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ալկոհոլային խմիչքների իրացումը.

- 2006 թվականի սեպտեմբերի 1-ից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված «2004» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ալկոհոլային խմիչքների իրացումը:[*6)]

$զ^3$) 2006 թվականի նոյեմբերի 1-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արգելվում է ԼՂՀ ներմուծված՝ «2004» թվագրված ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների իրացումը՝[*7)]

զ4) 2007 թվականի նոյեմբերի 15-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արգելվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված (բացի Հայաստանի Հանրապետությունից)՝ «2005» թվագրված ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների իրացումը՝[*9)]

$զ^5$) 2008 թվականի դեկտեմբերի 15-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արգելվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված (բացի Հայաստանի Հանրապետությունից) «2006» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը.[*10)]

$զ^6$) 2010 թվականի օգոստոսի 1-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արգելվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված «2007» թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը.[*11)]

$զ^7$) 2012 թվականի հունվարի 1-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արգելվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունից) «2008» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների իրացումը.[*13)]

$զ^8$) 2016 թվականի հունվարի 1-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արգելվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունից) «2011» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների իրացումը.[*15)]

է) սույն որոշմամբ սահմանված իրացման թույլատրելի ժամկետներից հետո հին նմուշի (գործածությունից հանված) դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

2003 թվականի ապրիլի 1-ից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծվող և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող անթափանց թաղանթներով ամբողջովին կամ մասնակիորեն ծածկված (դրոշմանիշի սերիան, համարը և այլ պաշտպանիչ տարրեր պարունակող մասերը) դրոշմանիշերով դրոշմավորված կամ նույնականացնող նշումներով նշագրված (հաստատված նմուշով չնախատեսված նմուշներ պարունակող) դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը դիտվում է որպես չդրոշմավորված ապրանքների իրացում:

Սույն ենթակետում նշված ապրանքները ենթակա են ոչնչացման չդրոշմավորված ապրանքների ոչնչացման կարգին համապատասխան:[*2)]

3. Սույն որոշման 1-ին կետի «բ» ենթակետով *հաստատված*[*12)] ցանկին չհամապատասխանող տարաներով ոգելիցխմիչքի և ծխախոտի արտադրանքի արտադրության դեպքում դրանք արտադրողներն այդ արտադրանքի դրոշմավորումը կատարում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչության կողմից սահմանված կարգով:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բռնագրավված, հոգուտ պետության տիրազուրկ ճանաչված և ժառանգության իրավունքով պետությանն անցած սույն որոշմանը համապատասխան չդրոշմավորված ապրանքների իրացումը կատարվում է ակցիզային դրոշմանիշերով: Այդ ապրանքների սույն որոշմանը համապատասխան դրոշմավորման համար պատասխանատու է համապատասխան պետական լիազորված մարմինը: Վերջինիս ակցիզային դրոշմանիշերը տրամադրվում են անհատույց: Սույնկետով նախատեսված ապրանքների դրոշմավորման կարգը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչությունը:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչությանը.

ա) մեկամսյա ժամկետում հաստատել սույն որոշման 3-րդ կետով սահմանված կարգը:

բ) մեկամսյա ժամկետում հաստատել սույն որոշման 4-րդ կետով սահմանված կարգը՝ համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության պետական վարչության հետ.

գ) մեկամսյա ժամկետում հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող դրոշմավորման ենթակա ապրանքների համար նախատեսված «1997», «1998» և «1999» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերի մնացորդների դուրս գրման և ոչնչացման, ինչպես նաև 2000թվականի փետրվարի 1-ի դրությամբ ստացված, չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերի վերադարձման կարգը՝ համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

դ) մեկամսյա ժամկետում հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային դրոշմանիշերի ստացման, պահպանման, հաշվառման, տրամադրման և դրանց նկատմամբ հսկողության կարգը՝ համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության պետական վարչության հետ:

ե)յուրաքանչյուր տարվա համար անհրաժեշտության դեպքում հաստատել ակցիզային դրոշմանիշերի նմուշները, այդ թվում՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող անձանց եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության միջեւ կնքված պայմանագրով նախատեսված ակցիզային դրոշմանիշերի նմուշները: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կողմից հաստատված նմուշից տարբերվող նմուշի դրոշմանիշներով արտադրանքը դրոշմավորելու ցանկության դեպքում՝ արտադրված արտադրանքի դրոշմավորումն իրականացվում է հարկ վճարողի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության միջև կնքված պայմանագրին համապատասխան՝ համաձայնեցված նմուշի ակցիզային դրոշմանիշներով: Յուրաքանչյուր նմուշի ակցիզային դրոշմանիշների հաստատման, պատվիրման, տպագրման և ստացման աշխատանքների ֆինանսավորումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեիմիջոցների հաշվին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:[*12)]

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության հետ կնքված պայմանագրով նախատեսված ակցիզային դրոշմանիշերը պատվիրում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը: Այդ ակցիզային դրոշմանիշերի տպագրության, առաքման ֆինանսավորումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության հետ պայմանագիր կնքած անձանց միջոցների հաշվին:[*8)]

6. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1999թ. հոկտեմբերի 5-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման մասին» թիվ 94 որոշումը:

7. Սույն որոշմամբ հաստատված կարգերի վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերը սահմանված կարգով հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչությունը:

8. Սույնորոշումըուժիմեջ է 2000 թվականի հուլիսի 1-ից, դրույթները գործում են սույն թվականի փետրվարի 1-ից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հաստատված է
ԼՂՀ կառավարության 2000 թվականի
հուլիսի 11-ի թիվ 138 որոշմամբ

Ց Ա Ն Կ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային [*12)]դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների

Արտադրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ապրանքային անվանացանկի	Ապրանքախմբի անվանումը
2204,2205,2206	խաղողի և այլ գինիներ
2207	էթիլային սպիրտ[*12)]
2208	սպիրտային խմիչք,*բացառությամբ մինչև 9 տոկոս սպիրտայնություն ունեցող սպիրտային խմիչքների*[*12)]
2402	ծխախոտի արտադրանք

Հաստատված է
ԼՂՀ կառավարության 2000 թվականի
հուլիսի 11-ի թիվ 138 որոշմամբ

Ց Ա Ն Կ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ոգելիցխմիչքիու էթիլային սպիրտի (ներառյալ շշալցումը) և Լեռնային Ղարաբաղում արտադրվող ծխախոտի արտադրանքի մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար թույլատրելի չափերով տարաների (տուփերի)

Ապրանքի անվանումը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Տարայի թույլատրելի չափը (տուփում՝ գլանակների թիվը) (հատ)
2204, 2205, 2206, 2208	Ոգելիցխմիչք[*12)]	*0.1 լ,0.125լ, 0.187լ, 0.2 լ,*[*5)]0.25լ, 0.33լ,*0.375լ,*[*5)] 0.5լ , 0.7լ , 0.75լ. 0.8լ, 1.0լ,*1.5 լ, 3.0 լ*[*5)]
2207	էթիլային սպիրտ[*12)]	0.5 լ
2402	Ծխախոտի արտադրանք այդ թվում՝ սիգարետների՝ ֆիլտրով. Սիգարետներ՝ առանց ֆիլտրի	10, 20 12, 20

Հաստատված է
ԼՂՀ կառավարության 2000 թվականի
հուլիսի 11-ի թիվ 138 որոշմամբ

Կ Ա Ր Գ

ԼՂՀ-ում արատադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային [*12)] դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը կանոնակարգում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների (այսուհետ՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ) ակցիզային [*12)] դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման կարգը:

2. *(հանվել է)* [*12)]

II. Դրոշմավորման կարգը

3. *(հանվել է)*[*12)]

4. *(հանվել է)*[*12)]

5. *(հանվել է)*[8),*12)]

6. Արգելվում է սույն կարգին համապատասխան ձեռք բերված ակցիզային դրոշմանիշների օտարումը կամ փոխանցումը (տրամադրումը, հատկացումը և այլն) այլ անձանց:

III. Ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերումը

7. Ակցիզային դրոշմանիշները ձեռք են բերվում հարկային մարմնից:

8. Ակցիզային դրոշմանիշները ձեռք են բերում միայն դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող անձինք՝ մինչև այդ ապրանքների սահմանված կարգով իրացումը:

9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված՝ դրոշմավորման ենթակա էթիլային սպիրտի արտադրանքի համար նախատեսված ակցիզային յուրաքանչյուր դրոշմանիշի ձեռքբերման համար վճարվում է 100 դրամ, ոգելիցխմիչքի արատադրանքի համար՝ *50*[*4)] դրամ, ծխախոտի արտադրանքի համար՝ *25*[*4)] դրամ:

10. Ակցիզային դրոշմանիշերի ձեռք բերման համար վճարված գումարը հանդիսանում է՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողների համար՝ սահմանված կարգով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի կանխավճար:

11. Ակցիզային դրոշմանիշեր ձեռք բերելու համար հարկային մարմին ներկայացվում են.

ա) դիմում՝ 2 օրինակից՝ համաձայն սույն կարգի N 4 հավելվածի

բ) ակցիզային դրոշմանիշների ձեռքբերման համար վճարված գումարը հաստատող փաստաթղթի պատճենը.

գ) հաշվետվություն ակցիզային դրոշմանիշների օգտագործման վերաբերյալ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կողմից սահմանված կարգով.

դ) արտադրողների (ներառյալ շշալցում իրականացնողների) կողմիցորպեսհումքձեռք բերված սպիրտի ձեռքբերման հաշվարկային փաստաթղթերի օրինակները.[*4),*12)]

ե/ լիցենզիայի և տարեկան պետական տուրքի վճարման անդորրագրի և համապատասխանության սերտիֆիկատի (պարտադիր լինելու դեպքում) պատճենները: Լիցենզիայի և տարեկան պետական տուրքի անդորրագրի պատճենները կարող են չներկայացվել, եթե դրանք տվյալ տարվա համար մեկ անգամ արդեն ներկայացվել են: Համապատասխանության սերտիֆիկատը գործողության յուրաքանչյուր ժամանակահատվածի համար ներկայացվում է մեկ անգամ: Այս դեպքում սույնկետում նշված փաստաթղթերին կից ներկայացվող գրությունումնշվում է այն գրության ամսաթիվը և համարը, որինկից ներկայացվել են այդ պատճենները:[*4)]

12. Հարկային մարմինը ակցիզային դրոշմանիշերը տրամադրում է սույն կարգի 11-րդ կետում նշված բոլոր փաստաթղթերը ներկայացնելու օրվա հաջորդող *յոթ*[*4)] աշխատանքային օրվա ընթացքում: *Ակցիզային դրոշմանիշեր չեն տրամադրվում, եթե դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ ակցիզային հարկի գծով գերավճարը քիչ է պահանջվող դրոշմանիշերի համար վճարման ենթակա գումարից կամ արտադրական հզորությունները չեն համապատասխանում պահանջվող դրոշմանիշերի քանակին: Այս դեպքում հայտը կարող է բավարարվել մասնակի՝ գերավճարի գումարին կամ արտադրական հզորություններին համապատասխան:*[*4)]

Ընդ որում,[*4)]ակցիզային դրոշմանիշերի տրամադրումը կատարվում է ինչպեսսույն կարգի 11-րդ կետում նշված փաստաթղթերի, այնպես էլ նշված անձանց մոտ հարկային մարմնի կողմից արտադրական կարողությունների ուսումնասիրության վեաբերյալ կազմվա*ծ տեղեկանքի*[*4)] հիման վրա:

13. Ակցիզային դրոշմանիշերը տրամադրվում են դրանց ձեռքբերման համար դիմում ներկայացրած անձի լիազորված անձին՝ անձնագրի ներկայացմամբ: Ակցիզային դրոշմանիշերի ստացումը հաստատվում է անդորրագրով՝ համաձայն սույն կարգի N 5 հավելվածի:

IV. Ակցիզային դրոշմանիշերի հաշվառման և օգտագործման կանոնները

14. Ակցիզային դրոշմանիշերը համարվում են խիստ հաշվառման փաստաթղթեր և սահմանված կարգով հաշվառվում են, ինչպես հարկային մարմնում, այնպես էլ դրոշմանիշերը ձեռք բերող անձանց կողմից: *Վերջիններս դրանց գծով վարում են առանձնացված հաշվառում՝ խիստ հաշվառման փաստաթղթերի համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:*[*8)]

15. Հարկային մարմինը յուրաքանչյուր արտադրողի համար վարում են դրոշմավորման ենթակա ապրանքների (ըստ արտադրանքի ապրանքախմբերի) ակցիզային դրոշմանիշերի շարժի (տրամադրման և ընդունման) հաշվառման քարտեր՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչության սահմանված կարգով:

16. Հարկային մարմինը անհրաժեշտության դեպքում կարող են վարել լրացուցիչ գրանցամատյաններ (քարտեր) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչության սահմանված կարգով:

17. Դրոշմավորումը կատարվում է ապրանքի վրա նախատեսված տեղերում՝ սոսնձման միջոցով փակցնելով դրոշմանիշը՝ սույն կարգի N 6 հավելվածում նշված ձևով: Ապրանքների դրոշմավորման ժամանակ , *բացառությամբ ինքնասոսնձվող դրոշմանիշերով դրոշմավորման դեպքերի,*[*8)] կիրառվում է այնպիսի սոսինձ, որը բացառում է դրոշմանիշը պոկելու հնարավորությունը՝ առանց ապրանքի ապրանքային տեսքը վնասելու: Օգտագործվող սոսինձըպետք է բացառի ակցիզային դրոշմանիշերի բազմակի օգտագործման հնարավորությունը՝ առանց ակցիզային դրոշմանիշի ամբողջականությունը վնասելու:

18. Դրոշմավորված ապրանքի վրա պետք է փակցված լինի չվնասված և ամբողջական դրոշմանիշը:

19. Արգելվում է դրոշմավորումը կատարել սույն կարգի N 6 հավելվածում նշված ձևերին չհամապատասխանող տեսքով:

Արգելվում է հաստատված նմուշի դրոշմանիշերի վրա կատարել նշագրումներ (կնիքներով, դրոշնակնիքներով կամ այլ կերպ), դրոշմանիշերը կամ դրա մի մասը ծածկել անթափանց թաղանթներով:[*2)] *Անթափանց թաղանթներով ամբողջովին կամ մասնակիորեն ծածկված (դրոշմանիշի սերիան, համարը և այլ պաշտպանիչ տարրեր պարունակող մասերը) դրոշմանիշներով դրոշմավորված կամ նույնականացնող նշումներով նշագրված (հաստատված նմուշով չնախատեսված նույնականացնող նշումներունեցող) դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների իրացումը համարվում է որպես չդրոշմավորված ապրանքների իրացում:*[*12)]

20. Չօգտագործված կամ վնասված դրոշմանիշերը ենթակա են վերադարձման՝ սույն կարգով սահմանված դեպքերում և ժամկետներում:

V. Չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերի վերադարձման կարգը

21. Չօգտագործված ակցիզային դրոշմանիշերը վերադարձվում են

ա) դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող անձանց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարման (գործունեության դադարեցման) դեպքում՝ մինչև լուծարային ակտի ստորագրումը.

բ) ձեռք բերված ակցիզային դրոշմանիշերը 3 ամսյա ժամկետում չօգտագործելու դեպքում՝ ձեռք բերման օրվանից մինչև 3-ամսյա ժամկետի լրանալու օրը ներառյալ:

Սույնկետի կիրառման առումով ակցիզային դրոշմանիշերը չօգտագործված չեն համարվում, եթե դրանք սույն կարգին համապատասխան փակցված են դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողների մոտառկա պատրաստի արտադրանքի վրա:

22. Վնասված ակցիզային դրոշմանիշերը կարող են վերադարձվել հարկային մարմին՝ դրանց ձեռք բերման օրվանից մինչև 3-ամսյա ժամկետը լրանալու օրը ներառյալ:

Վնասված ակցիզային դրոշմանիշերը ներկայացվում են հարկային մարմին՝ դրանք փակցնելով առանձին էջերի վրա ապահովելով հետևյալ պայմանները՝

ա) ակցիզային դրոշմանիշները պետք է փակցված լինեն առանձին էջերի վրա՝ առանց ծալքերի և անհարթությունների.[*12)]

բ) պետք է պարզ երևան ակցիզային դրոշմանիշի սերիան և դրա կենտրոնական մասը.

գ) ակցիզային դրոշմանիշի պատռվածքի դեպքում պատռված մասերը պետք է միացվեն.

դ) վերադարձվող յուրաքանչյուր ակցիզային դրոշմանիշի մակերեսը (այդ թվում՝ հավաքված առանձին մասերից) պետք է կազմի իր սկզբնական չափի առնվազն 60 տոկոսը:

23. Չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերի վերադարձման համար հարկային մարմին ներկայացվում են՝

ա) դիմում՝ ակցիզային դրոշմանիշերի հանձնման[*4)] համար՝ դրանում առանձին նշելով ակցիզային դրոշմանիշերի վերադարձման պատճառները.

բ) ակցիզային դրոշմանիշերի ստացման անդորրագրի պատճենը.

24.Հարկային մարմինն ակցիզային դրոշմանիշներ հանձնելու մասին դիմումն ստանալուց հետոյոթ աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է դրոշմանիշների համապատասխանությունը «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջներին և ընդունում է որոշումօրենքի պահանջներին դրանց համապատասխանության մասին: Դրական որոշման դեպքում՝ ակցիզային դրոշմանիշների համար վճարված գումարը համարվում է ակցիզային հարկի գերավճար և ենթակա է այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման՝ «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

25. Չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշների վերադարձը հարկային մարմնի կողմիցչի ընդունվում, եթե չեն պահպանվել «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները:

*Չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշները սույն կարգի 21-րդ կետով սահմանված ժամկետներում չվերադարձվելու, ինչպես նաև հարկային մարմնի կողմից դրանց վերադարձը չընդունվելու դեպքերում «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վճարվում է ակցիզային հարկ:[*4),*12)]*

VI. Դրոշմավորման կարգի նկատմամբ հսկողությունը

26. Դրոշմավորման կարգի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչությունը

27. Սույն կարգի խախտումն առաջացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

Հավելված 1
Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում
արտադրվող ակցիզային հարկով հարկման
ենթակա որոշ ապրանքների ակցիզային նորնմուշի
դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման կարգի

(ուժը կորցրած է ճանաչվել)[*12)]

Հավելված N 2
Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում
արտադրվող ակցիզային հարկով հարկման
ենթակա որոշ ապրանքների ակցիզային նորնմուշի
դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման կարգի

(ուժը կորցրած է ճանաչվել)[*5),*12)]

Հավելված N 3
Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում
արտադրվող ակցիզային հարկով հարկման
ենթակա որոշ ապրանքների ակցիզային նորնմուշի
դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման կարգի

(ուժը կորցրած է ճանաչվել)[*12)]

Հավելված N 4
Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային
հարկով հարկման
ենթակա որոշ ապրանքների ակցիզային նորնմուշի
դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման կարգի

ԼՂՀ ՀՊՎ _____ հարկային մարմնի պետին
(հարկային մարմնի անվանումը)

Գրանցման N_____

Դ Ի Մ Ո Ւ Մ
ակցիզային դրոշմանիշերի ձեռք բերման

_____
(կազմակերպության լրիվ անվանումը, հասցեն)
_____
(բանկային տվյալները, ՀՎՀՀ, պետական ռեգիստրում գրանցման համարը)

խնդրում է տրամադրել ակցիզային դրոշմանիշեր՝ ընդհանուր թվով _____

_____ գումարի չափով (_____)
(տառերով)

Տվյալ ակցիզային դրոշմանիշերն անհրաժեշտ են՝ _____

1.
_____
(ապրանքի անվանումը, տարայի չափը, թիվը)

2.
_____
(ապրանքի անվանումը, տարայի չափը, թիվը)

3.
_____
(ապրանքի անվանումը, տարայի չափը, թիվը)

4.
_____
(ապրանքի անվանումը, տարայի չափը, թիվը)

Կազմակերպության կողմից ակցիզային դրոշմանիշերի համար գումարը մուտքագրվել է _____

հաշվին _____ վճարային փաստաթղթով «____» _____ թ.

և վճարման գումարը կազմում է _____:
(տառերով)

Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքերի դրոշմավորման կարգին ծանոթ ենք:

Կազմակերպության տնօրեն _____ _____
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

Գլխավոր հաշվապահ _____ _____
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

Կ.Տ. «_____»_____ թ.

Հավելված N 5
Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում
արտադրվող ակցիզային հարկով հարկման
ենթակա որոշ ապրանքների ակցիզային նորնմուշի
դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման կարգի

ԼՂՀ ՀՊՎ _____ հարկային մարմնի պետին
(հարկային մարմնի անվանումը)

ԱՆԴՈՐԲԱԳԻՐ

ակցիզային դրոշմանիշերի ստացման

Գրանցման N_____ «____» _____ թ.

_____
(կազմակերպության լրիվ անվանումը, հասցեն)

_____
(բանկային տվյալները, ՀՎՀՀ, պետական ռեգիստրում գրանցման համարը)

Ակցիզային դրոշմանիշեր՝
_____ հատ՝ _____ գումարի չափով
(տառերով)

Ընդհանուր գումարը՝ _____
(տառերով)

Ակցիզային դրոշմանիշեր բաց թողնող աշխատող _____ _____
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

Ստացավ _____
(պաշտոնը, անունը, ազգանունը)

1._____
(դրոշմանիշի տեսակը, սերիան, թիվը)

2._____
(դրոշմանիշի տեսակը, սերիան, թիվը)

3._____
(դրոշմանիշի տեսակը, սերիան, թիվը)

4._____
(դրոշմանիշի տեսակը, սերիան, թիվը)

N_____լիազորագրով « _____» _____ թ.

Անձնագիր _____ N _____ տրված _____

Ստացա «_____» _____ թ. _____
(ստորագրություն)

ԼՂՀ ՀՊՎ Շ(Ք) ՀՏ Ստացող կազմակերպություն
Կ.Տ.

Հավելված N 6 [*3)]
Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում
արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա
որոշ ապրանքների ակցիզային նորմուշի
դրոշմանիշերով պարտադիր
դրոշմավորման կարգի

Ակցիզային դրոշմանիշերի փակցման ձևը



Ցելոֆանապատված ծխախոտի տուփերի համար ակցիզային դրոշմանիշը փակցվում է անմիջապես ծխախոտի տուփի վրա (ցելոֆանի տակ):

**1) ԼՂՀ կառավարության 06.05.02 թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի թիվ 138 որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 105 որոշման խմբագրությամբ*

**2) ԼՂՀ կառավարության 11.03.03թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի թիվ 138 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» թիվ 62 որոշման խմբագրությամբ*

**3) ԼՂՀ կառավարության 23.12.03թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի թիվ 138 որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 373 որոշման խմբագրությամբ*

**4) ԼՂՀ կառավարության 22.06.04. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի թիվ 138 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 245 որոշման խմբագրությամբ*

**5) ԼՂՀ կառավարության 11.10.05թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի թիվ 138 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» թիվ 397 որոշման խմբագրությամբ*

**6) ԼՂՀ կառավարության 27.06.06թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի թիվ 138 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» թիվ 332 որոշման խմբագրությամբ*

**7) ԼՂՀ կառավարության 29.09.06թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի թիվ 138 որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 486 որոշման խմբագրությամբ*

**8) ԼՂՀ կառավարության 27.03.07թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի թիվ 138 որոշման մեջ լրացումվպ8 կատարելու մասին» թիվ 128 որոշման խմբագրությամբ*

**9) ԼՂՀ կառավարության 30.10.07թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի թիվ 138 որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 460 որոշման խմբագրությամբ*

**10)ԼՂՀ կառավարության 01.12.08թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի թիվ 138 որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 836 որոշման խմբագրությամբ*

**11)ԼՂՀ կառավարության 27.07.10թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի թիվ 138 որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 467-Ն որոշման խմբագրությամբ*

**12)ԼՂՀ կառավարության 22.03.11թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի թիվ 138 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 149-Ն որոշման խմբագրությամբ*

**13)ԼՂՀ կառավարության 27.09.11թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի N 138 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 720-Ն որոշման խմբագրությամբ*

**14)ԼՂՀ կառավարության 04.03.14թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի N 138 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 116-Ն որոշման խմբագրությամբ*

**15)ԼՂՀ կառավարության 14.07.15թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի N 138 որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 451-Ն որոշման խմբագրությամբ*